



ՄՈՒՐԲ ԶԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Խ ԿԵՂԵՅԻ



Արսաբաբան Կիրակի

01 ՄԱՐՏ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Հայ մանուկիմ	
կրօնական դաստիարակութիւնը	Էջ 4
Աստուած եւ աշխարհիկ մտահոգութիւններ	Էջ 5
Ծանուցում	Էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ
(33.2-22)

Ողորմէ՛ մեզի, Տէր, որովհետեւ քեզի՛ յուսացինք. անհաւատներու սերունդը կորուստի պիտի մատնուի, բայց դուն պիտի փրկես մեզ նեղութեան ժամանակ: Ժողովուրդները քու ասեղ ձայնէդ շնորհքով, հեթանոսները փախան քու վախէդ: Ինչպէս խառնիճն ու մարախը կանաչութիւնը կ'ոչնչացնեն, այնպէս

յափշտակիչները պիտի թափին անոնց աւարին վրայ, եւ անոնք ծաղր ու ծանակ պիտի ըլլան: Սուրբ է մեր Տէր Աստուածը որ բարձունքներուն մէջ կը բնակի. իրաւունքով եւ արդարութեամբ պիտի լեցնէ Սիոնը: Այն ատեն հեթանոսները Օրէնքին ձեռքը պիտի մատնուին, իսկ մենք մեր գանձերով

իմաստութիւնը, գիտութիւնը եւ աստուածապաշտութիւնը պիտի ըլլան այն գանձերը, որոնցմով պիտի արդարանանք:

պիտի փրկուինք. իմաստութիւնը, գիտութիւնը եւ աստուածապաշտութիւնը պիտի ըլլան այն գանձերը, որոնցմով պիտի արդարանանք: Այն ատեն ձեր կրած երկիրները իրե՛նք պիտի կրեն. անոնք՝ որոնցմէ դուք կը վախնայիք, իրե՛նք պիտի վախնան ձեզմէ. պատգամաւորներ պիտի զրկեն ձեզի՛ խաղաղութիւն ուզելով, դառնապէս պիտի լան եւ խաղաղութիւն խնդրեն, որովհետեւ անոնց ճամբաները իրենց աւարտին հասան: Այլ պիտի չվախնաք հեթանոսներէն. անոնց հետ ձեր դաշինքը վերջ պիտի գտնէ եւ ա՛լ գանոնք մարդու տեղ պիտի չդնէք: Աշխարհը կը սգայ, որովհետեւ անչքացաւ. Լիբանանը մերկացաւ, Սարոնի դաշտագետինը օտթէն այրեցաւ, Գալիլիա եւ Կարմեղոս լերկ մնացին: «Հիմա պիտի ելլեմ, -կ'ըսէ Տէրը,- եւ պիտի ցոյց տամ իմ փառքս ու

գորութիւնս, եւ դուք պիտի տեսնէք ու հասկնաք թէ՛ գուր էր ձեր չափազանց ինքնավստահութիւնը եւ կրակը պիտի բնաջնջէ ձեզ: Այո, հեթանոսները պիտի այրին այնպէս՝ ինչպէս դաշտին փուշը կը կտրեն ու կրակը կը նետեն: Հեթանոսները պիտի լսեն ինչ որ ըրի, իմ ժողովուրդս պիտի ճանչնայ իմ գորութիւնս»: Անօրէնները Սիոնէն դուրս դրուեցան եւ արդէն դողը բռներ է ամբարիշտները. իսկ ո՞վ ձեզի պիտի պատմէ յաւիտենական կրակին մասին: Եթէ արդարութեամբ ապրիք եւ ուղիղ խօսիք, անօրէնութիւնն ու անիրաւութիւնը ատէք, ձեր ձեռքերը կաշառքէ հեռու պահէք, ոճրային առաջարկներ չլսելու համար ձեր ականջները խցէք եւ անիրաւութիւն չտեսնելու համար ձեր աչքերը փակէք, բարձր եւ հաստատուն ժայռի վրայ շինած կ'ըլլաք ձեր տունը. եւ այն ատեն ո՛չ հացի պակաս պիտի ունենաք եւ ոչ ջուրի. պիտի տեսնէք թագաւորը իր փառքով, ձեր աչքերը պիտի տեսնեն անոր անսահման երկիրը, եւ դուք պիտի խոկաք Տիրոջ երկիրդին մասին: Այն ատեն, ալ ո՛չ մարդահամար կատարողներ պիտի գան, ո՛չ հարկահաւաքներ, եւ ոչ ալ ձեր ամբողջութիւնները լրտեսողներ: Այլ պիտի չլսէք Ասորեստանի անբարտաւան առաջարկները, ոչ ալ անոր խուժողութիւնը, զոր կարելի չէ հասկնալ: Ահաւասիկ Սիոնը, մեր փրկութեան քաղաքը. ձեր աչքերով տեսէք Երուսաղէմը, ճոխութեան քաղաքը, յաւիտենապէս անշարժ վրանի մը պէս, որուն ո՛չ

ցիցերը կը խախտին, ոչ ալ պարանները կը փրթին: Այնտեղ ձեր մէջ ներկայ պիտի ըլլայ Տէրը իր փառքով, եւ երկիրը ձե՛րը պիտի ըլլայ իր լայնահուն գետերով ու ջրանցքներով. ա՛լ օտարութիւն պիտի չերթաք եւ ձեր նաւերը պատերազմի պիտի չելլեն, որովհետեւ մեր մեծ Աստուածը այլեւս պիտի չլքէ մեզ: Տէրն է մեր հայրը, Տէրն է մեր դատաւորը, Տէրն է մեր իշխանը, Տէրն է մեր թագաւորը, Տէրն է մեր փրկիչը, ի՛նքն է որ մեզ պիտի փրկէ:

Տէրն է մեր հայրը, Տէրն է մեր դատաւորը, Տէրն է մեր իշխանը, Տէրն է մեր թագաւորը, Տէրն է մեր փրկիչը, ի՛նքն է որ մեզ պիտի փրկէ:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ
(12.1-13.10)

Ուստի, եղբայրներ՝, քանի Աստուած այնքան ողորմած եղաւ մեզի հանդէպ, կ'աղաչեմ որ դուք ձեզ Աստուծոյ ընծայէք որպէս կենդանի գոհ մը՝ իրեն վերապահուած, որովհետեւ ատիկա է Աստուծոյ ուզած ճշմարիտ պաշտամունքը: Այս աշխարհի մարդոց վարմունքը մի՛ ընդօրինակէք, այլ նորոգուած միտքերով նոր մարդ եղէք, որպէսզի ձեր փորձառութեամբ ընտրէք լաւը, գիտնալով Աստուծոյ կամքը, այսինքն՝

Այս աշխարհի մարդոց վարմունքը մի՛ ընդօրինակէք, այլ նորոգուած միտքերով նոր մարդ եղէք....:

ինչ որ բարի է, ընդունելի է իրեն եւ կատարեալ: Ինծի տրուած Աստուծոյ շնորհքով հետեւեալ պատուէրը կու տամ իւրաքանչիւրիդ.- մեծամիտ եւ ինքնահաւան մի՛ ըլլաք.

Աստուծմէ մեզի տրուած հաւատքին չափով գնահատեցէ՛ք դուք ձեզ:

Ինչպէս մեր մարմինը բազմաթիւ անդամներ ունի, որոնց պաշտօնը նոյնը չէ սակայն, այնպէս ալ Քրիստոսի միացած ըլլալով՝ մենք բոլորս մէկ մարմին ենք: Թէպէտ որպէս անդամներ իրարու կապուած ենք, բայց Աստուծոյ շնորհքը իւրաքանչիւրիս տարբեր պարգեւ մը տուած է, գոր պէտք է գործածենք: Եթէ պատգամախօսութեան պարզելը ունինք՝ պէտք է պատգամենք մեր հաւատքին համեմատ: Եթէ ծառայելու շնորհքը տրուած է՝ պէտք է ծառայենք: Եթէ ուսուցանելու ձիրքը ունինք՝ պէտք է ուսուցանենք: Եթէ յորգորելու կարողութիւնը ունինք՝ պէտք է յորգորենք: Իր ունեցածը ուրիշներուն բաժնողը առատօրէն թող բաշխէ: Վերակացու եղողը եռանդագին թող աշխատի: Ողորմութիւն ընողը խնդութեամբ թող ընէ:

Ձեր սէրը թող անկեղծ ըլլայ: Ատեցէք ինչ որ չար է եւ տեւաբար բարիին ձգտեցէք: Եղբօր պէս զիրար սիրեցէք գորովանքով: Յարգելու մէջ զիրար գերազանցեցէք: Եռանդագին աշխատեցէք առանց ծուլանալու: Ձերմեռանդ հոգիով Տիրոջ ծառայեցէք: Յոյսով ուրախացէք, նեղութեանց մէջ համբերող եղէք, յարատեւ աղօթեցէք: Կարիքի մէջ եղող եղբայրներուն օգնեցէք եւ միշտ հիւրասէր եղէք:

Բոլորին հանդէպ նոյն վերաբերումը ունեցէ՛ք....:

Օրհնեցէ՛ք ձեզ հաւածողները. մի՛ անիծէք, այլ օրհնեցէք: Ուրախացողներուն հետ ուրախացէք

եւ լացողներուն հետ լացէք: Բոլորին հանդէպ նոյն վերաբերումը ունեցէք. մեծամիտ մի՛ ըլլաք, խոնարհ մարդոց ալ ընկերութիւն ընելու գիշեցէք, եւ դուք ձեզ իմաստուն մի՛ համարէք:

Ոեւէ մէկուն չարիքին չարիքով մի՛ հատուցանէք: Ջանացէք ընել ա'յն ինչ որ բոլոր մարդոց աչքին բարի է: Որքան կրնաք՝ ամենուն հետ խաղաղ ապրեցէք: Սիրելիներ՝, երբեք դուք անձամբ վրէժ լուծելու մասին մի՛ մտածէք, այլ ձգեցէք որ Աստուծոյ բարկութիւնը ընէ ատիկա. որովհետեւ Տէրը Սուրբ Գիրքին մէջ կ'ըսէ. «Ի՛մս է դատելու եւ պատժելու իրաւունքը. ե՛ս պիտի հատուցանեմ», իսկ ուրիշ տեղ մը կ'ըսէ. «Եթէ թշնամիդ փաղցած է, հաց տուր իրեն. եթէ ծարաւ է, ջուր տուր: Այսպէս վարուելովդ արդէն ամօթը զիմ կ'այրէ»: Մի՛ պարտուիր չարէն, այլ բարիով յաղթէ չարին:

Ամէն մարդ պետական իշխանութեանց պէտք է հնազանդի, որովհետեւ առանց Աստուծոյ թոյլտուութեան իշխանութիւն չի կրնար ըլլալ, եւ գոյութիւն ունեցող իշխանութիւնները Աստուծմէ կարգուած են: Ուստի, ով որ իշխանութեանց կը հակառակի՝ Աստուծոյ հրամանին է որ կը հակառակի, եւ հակառակողները իրենք զիրենք դատապարտութեան տակ կը դնեն: Իշխողները վախ չեն պատճառեր բարիք գործողներուն, այլ միայն չարագործներուն: Դուն կ'ուզե՞ս իշխանութենէն չվախնալ. բարիք գործէ, եւ անկէ գովասանք կը լսես. որովհետեւ Աստուծոյ պաշտօնեան է անիկա, քու բարիքիդ համար կարգուած: Իսկ եթէ չար գործես՝ վախցիր անկէ, որովհետեւ գուր տեղը չէ որ սուր կը կրէ. որպէս Աստուծոյ պաշտօնեայ բարկութեամբ կը դատէ եւ կը պատժէ չարագործները: Ահա թէ ինչո՛ւ պէտք է իշխանութեանց հնազանդիլ. ո՛չ միայն պատիժէն զերծ մնալու, այլ մանաւանդ խիղճով հանգիստ ըլլալու համար: Ատոր համար է նաեւ որ իշխանութեանց տուրք կը վճարէք, որպէսզի իբրեւ Աստուծոյ պաշտօնեաներ շարունակեն իրենց այդ դերը կատարել: Հետեւաբար անոնցմէ իւրաքանչիւրին հանդէպ ձեր պարտաւորութիւնը կատարեցէք, տուրքը տալով անոր՝ որուն տուրք պէտք է տաք, մաքսը տալով անոր՝ որուն մաքս պէտք է տաք, հնազանդելով անոր՝ որուն հնազանդութիւն կը պարտիք եւ յարգելով ան՝ որուն յարգանք կը պարտիք:

Ոեւէ մէկու ոեւէ բանով պարտական մի՛ մնաք. միմիայն զիրար սիրելու պարտաւորութիւնը ունեցէք, քանի որ իր ընկերը սիրողը կատարած կ'ըլլայ Աստուծոյ Օրէնքը: Որովհետեւ Աստուծոյ պատուիրանները, «Մի՛ շնար, Մի՛ սպաններ, Մի՛ գողնար, Սուտ վկայութիւն մի՛ ըներ, Մի՛ ցանկար» եւ միւս բոլորը խտացած են սա միակ պատուիրանին մէջ. «Սիրէ ընկերդ քու անձիդ պէս»: Ով որ իր ընկերը կը սիրէ, չարիք չ'ըներ անոր: Ուրեմն սիրել՝ կը նշանակէ Աստուծոյ Օրէնքը լման գործադրել:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
(5.17-48)

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.-
«Մի՛ կարծէք թէ եկայ Մովսէսի Օրէնքը
կամ մարգարէներու ուսուցումները ջնջելու, այլ
ամբողջացնելու: Հաստատ գիտցէք, որ բոլոր Օ-
րէնքն ու մարգարէութիւնները կէտ առ կէտ պիտի
իրականանան առանց բաւմըխկողութեան, մինչեւ
գայ այն օրը, երբ երկինքն ու երկիրը պիտի անցնին:
Ով որ ամենափոքր պատուիրանն իսկ զանց ընէ եւ
ուրիշներուն ալ պատուիրէ նոյնը կատարել, երկինքի
արքայութեանը մէջ յետինը պիտի նկատուի: Իսկ ով
որ գործադրէ պատուիրանները եւ նոյնը ուսուցանէ,
մեծ պիտի ըլլայ երկինքի արքայութեան մէջ: Կ'ըսեմ
ձեզի, երկինքի արքայութեանն ներս կրնաք մտնել
ա՛յն ատեն միայն, երբ Աստուծոյ պատուիրաններուն
ձեր հաւատարմութիւնը փարիսեցիներուն եւ օրէնքի
ուսուցիչներուն ունեցած հաւատարմութեանն աւելի
ըլլայ:

«Լսեր էք որ անցեալին ըստած է. «Մի՛
սպաննեք, որովհետեւ ան որ կը սպաննէ, պիտի
դատապարտուի»: Իսկ ես կ'ըսեմ

ձգէ՛ ընծադ
սեղանին
առջեւ, գնա՛
նախ հաշտուէ
եղբորդ հետ
եւ ապա եկուր
եւ ընծադ
Աստուծոյ
մատուցանէ:

ձեզի. Ով որ առանց պատճառի
իր եղբոր դէմ բարկանայ,
պիտի դատապարտուի: Ով
որ իր եղբայրը յիմար կոչէ,
դարձեալ ատեան պիտի
բերուի. կամ, անոր իր եղբայրը
անմիտ կոչէ, Գեհենի կրակին
պիտի դատապարտուի: Եթէ
զոհի սեղանին վրայ ընծադ
Աստուծոյ մատուցանելու
ատեն յիշես որ եղբայրդ
վշտացած է քեզմէ, ձգէ՛ ընծադ

սեղանին առջեւ, գնա՛ նախ հաշտուէ եղբորդ հետ
եւ ապա եկուր եւ ընծադ Աստուծոյ մատուցանէ:

«Երբ մէկը խնդիր ունի քեզի հետ եւ դատի կը
կանչէ քեզ, սկիզբէն համաձայնութեան եկուր
անոր հետ, երբ տակաւին ժամանակ ունիս.
այլապէս քեզ դատաւորին կը յանձնէ, դատաւորն

ով որ
ցանկութեամբ
նայի ոեւէ
կնոջ՝ արդէն
իսկ իր
սիրտին մէջ
շնութիւն
ըրած կ'ըլլայ
անոր հետ:

ալ՝ ոստիկանին, եւ բանտ կը
նետուիս: Վստահ եղիք, թէ
բանտէն պիտի չելլես մինչեւ
որ տուգանքիդ վերջին
դահեկանը չվճարես:

«Լսեր էք որ ըստած է. «Մի՛
շնար»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի,
թէ ով որ ցանկութեամբ նայի
ոեւէ կնոջ՝ արդէն իսկ իր
սիրտին մէջ շնութիւն ըրած
կ'ըլլայ անոր հետ: Եթէ աջ
աչքդ քեզ կը գայթակղեցնէ,

հանէ՛ եւ նետէ գայն, որովհետեւ նախընտրելի է
որ անդամներէդ մէկը կորսնցնես քան ամբողջ

մարմնով դժոխք նետուիս: Եթէ աջ ձեռքդ քեզ կը
գայթակղեցնէ, կտրէ՛ ու նետէ գայն, որովհետեւ,
նախընտրելի է որ անդամներէդ մէկը կորսնցնես,
քան ամբողջ մարմնով դժոխք նետուիս:

«Ըստած է նաեւ. «Ով որ իր կինը կ'արձակէ,
անոր արձակման թուղթ թող տայ»: Իսկ ես կ'ըսեմ
ձեզի. ան որ առանց պտոնկութեան պատճառի իր
կինը կ'արձակէ, ինք պատճառ կը դառնայ անոր
շնութիւն ընելուն: Նոյնպէս, շնութիւն ըրած
կ'ըլլայ ան՝ որ կ'ամուսնանայ արձակուած կնոջ
հետ:

«Լսեր էք նաեւ որ անցեալին ըստած է.
«Երդմնագանց մի՛ ըլլար, այլ կատարէ ինչ որ
երդուած է իր Աստուծոյ»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի. բնաւ
երդուած մի՛ ընէք, ո՛չ երկինքի վրայ, որովհետեւ
Աստուծոյ գահն է, ո՛չ երկրի վրայ, որովհետեւ
անոր ոտքի պատուանդանն է, ո՛չ Երուսաղէմի վրայ,
որովհետեւ Մեծ Թագաւորին՝ Աստուծոյ քաղաքն է, եւ
ո՛չ ալ քու գլուխիդ վրայ, որովհետեւ չես կրնար մագ
մը իսկ ձերմկնցնել կամ սեւցնել: Պարզապէս ձեր
այոն այո թող ըլլայ եւ ոչը՝ ոչ: Անկէ աւելին
չարէն կու գայ:

ձեր այոն այո
թող ըլլայ եւ
ոչը՝ ոչ:

«Լսեր էք որ ըստած է. «Աչքի դէմ աչք պիտի
հատուցանես եւ ակուայի դէմ՝ ակուայ»: Իսկ ես
կ'ըսեմ ձեզի. Մի՛ հակառակիր քեզի չարիք ընողին:
Եթէ մէկը աջ երեսիդ ապտակ գարնէ՛ միւս երեսդ
ալ դարձուր անոր: Եւ եթէ մէկը ուզէ քեզ դատի
կանչել շապիկդ առնելու համար, բաճկոնդ ալ
տուր անոր: Եթէ մէկը քեզ բռնադատէ մէկ մղոն
միասին երթալ՝ իր բեռը շալկելու համար, անոր
հետ երկու մղոն ալ գնա: Եթէ մէկը քեզմէ բամ մը
խնդրէ՛ տո՛ւր, եւ եթէ մէկը քեզմէ բան մը փոխ
առնել ուզէ, երես մի՛ դարձնեք:

«Լսեր էք արդարեւ որ ըստած է. «Միրէ՛ ընկերդ
եւ ատէ թշնամիդ»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի. Միրեցէ՛ք
ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները,
բարիք ըրէ՛ք ձեզ ատողներուն եւ աղօթեցէ՛ք
անոնց համար, որոնք ձեզ կը

բարիք ըրէ՛ք ձեզ
ատողներուն...:

չարչարեն ու կը հալածեն:
Այդպիսով դուք ձեր երկ-
նաւոր Հօր գաւակները
կը դառնաք, որովհետեւ
ան իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛
բարիներուն վրայ եւ անձրեւ կը տեղացնէ թէ՛
արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն վրայ: Եթէ
միայն սիրողները սիրէք, ի՞նչ տարբերութիւն
կ'ունենաք մեղաւորներէն: Մեղաւորներն ալ
նոյնը չե՞ն ըներ: Նմանապէս, եթէ միայն ձեր
ծանօթները բարեկամ նկատէք, հեթանոսներէն եւ
մեղաւորներէն աւելի ի՞նչ ըրած կ'ըլլաք: Անոնք
ալ նոյնը չե՞ն ըներ: Արդ, դուք կատարեալ եղէ՛ք,
ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»:

**ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻՆ
ԿՐՕՆԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ**

Գործար Ծ. ԱՐԴ. ՉԻՖԹՃԵԱՆ.

Կիրակնօրեան խորքին մէջ շարունակութիւնը պէտք է ըլլայ տան, եկեղեցւոյ, դպրոցին կամ այլ տեղ կատարուող քրիստոնէական դաստիարակութեան աշխատանքին: Սակայն դժբախտաբար դերերը շրջուած են ներկայիս: Կիրակնօրեայ վարժարանն է որ ընտանիքէն աւելի առաջնորդի դեր ունի: Այնտեղ սորվըլած սուրբ գրային դրուագը, խորքին մէջ պէտք է տան մէջ լսա՛ծ ըլլար փոքրիկը իր ծնողներէն ու մեծ ծնողներէն, սակայն ճի՛շդ հակառակը՝ ի՛նք է որ Կիրակնօրեայէն տուն կը տանի երբեմն իր լսածները, եւ տան մէջ գտնուողները՝ հայր, մայր, կամ նոյնիսկ մեծ ծնողներ, առաջին անգամ ըլլալով կը լսեն անոր պատմածը, երգած շարակներ կամ այն տօնին մասին, որ ճի՛շդ այդ օր հայ եկեղեցին տօնած է...:

Կիրակնօրեայ դպրոցին դերը երթալով աւելի կը շեշտուի, նկատի ունենալով քանի մը պարագաներ.

ա.- Կրօնի ուսուցման պարագայական ըլլալը հայ դպրոցէն ներս, որուն պատճառները բազմաթիւ են. հայապահպանման ի խնդիր՝ ազգային շեշտուած քարոզչութեան հետեւանքով կրօնագիտական նիւթերու, սուրբ գրային թէ՛ հայ եկեղեցւոյ պատմութեան նիւթերու տեղատուութիւն: Քանի՞ պահ կրօն կը դասաւանդուի դպրոցէն ներս, ի՞նչ պատրաստութիւն ունի այդ ուսուցիչը, ի վերջոյ ինչպիսի՞ անձ մըն է ան իբրեւ կրօնի ուսուցիչ՝ աշակերտներուն դիմաց կանգնած:

բ.- Քրիստոնէական դաստիարակութիւն չտեսած ծնողներութիւն յաւելում, որուն հետեւանքով տունէն ներս քրիստոնէական հաւատքի առարկաներու մասին անգիտութիւն: Այսպէս, հայրը կամ մայրը իրե՛նք չեն գիտեր ի՞նչ է Սուրբ Երրորդութիւնը, որո՞նք են հայ եկեղեցւոյ գլխաւոր տօները, կամ ի՞նչ է սուրբերու նահատակութեան իմաստը, Սուրբ Պատարագին նշանակութիւնը, եւ այլն, եւ ասոնց մասին իրենց գաւակներուն հարցումները բնականօրէն անպատասխան պիտի մնան:

գ.- Նիւթապաշտութիւն կամ հանգստաւէտ կեանքի փնտռութեամբ, որուն հետեւանքով տունէն, դպրոցէն, ակումբէն, միութենէն եւ ամէն տեղէ ներս՝ քրիստոնէական սկզբունքներու եւ Քրիստոսի ուսուցած ճշմարտութիւններուն նկատմամբ հակասութեան երեւոյթներ: Իր դրամը շուսթի մսխող ծնողք մը ինչպէ՞ս պիտի կարենայ սորվեցնել իր գաւակներուն՝ Քրիստոսի ուսուցած՝ ունեցածով գոհանալու, կամ աղքատախնամութեան առաքինութիւնները:

դ.- Նոր բուսնող բազմազան ու զարմանազան հոգեւոր շարժումներու գոյութիւնը, որոնք իրենց ընթանած «հոգեւորութիւն»ը կ'ուսուցանեն իրենց հետեւորդներուն, եւ քիչ չէ անոնց հետեւող մեր եկեղեցւոյ գաւակներուն թիւը: Այսպիսի շարժումներ

խոպան գետին կը փնտռեն: Անոնք նաեւ դիւրին միջոց ու առիթ կը փնտռեն: Խոպան գետին՝ երբ երկար ժամանակ քրիստոնէական դաստիարակութիւն չէ կատարուած ազգի մը կեանքին մէջ, անոնք շուտով կը թափանցեն: Երկրորդ, դիւրին միջոցին կը նային՝ այսինքն արդէն քրիստոնէայ ազգերու վրայ կը կազմակերպեն իրենց «յարձակում»ները, եւ չէ՛ն երթար Ափրիկէ՝ կիսավայրենի ցեղերուն, կամ չէ՛ն երթար իսլամական աշխարհին, անոնց դէպի քրիստոնէութիւն դարձը ապահովելու համար: Երրորդ, անոնք առիթներ կը փնտռեն՝ այսինքն, պատեհութիւն մը, արկած մը, յուսախաբութիւն մը, նիւթական անձուկ վիճակներ, որոնք լաւագոյն առիթները կ'ըլլան անոնց «յարձակում»ներուն: Այսպիսի շարժումներուն կեր կը հանդիսանայ յատկապէս երիտասարդութիւնը, դժբախտաբար, որովհետեւ բարոյական դժուարութիւնները, փոխուող աշխարհին դիմաց անպաշտպան անձերը երիտասարդներն են ընդհանրապէս, որոնք յաճախ շփոթ վիճակ մը ունին եւ չեն գիտեր ո՞ր ուղղութեամբ կողմնորոշուիլ: Այսպէս օրինակ՝ սիրոյ մէջ յուսախաբութիւն մը, որուն հետեւանքով հոգեկան տագնապ մը, սքանչելի առիթ մըն է ներգրաւելու երիտասարդը կամ երիտասարդուհին, կեղծ ապահովութիւն մը ներշնչելով անոր, մինչեւ որ թակարդին մէջ իյնայ ենթական: Անկէ վերջ դիւրին կ'ըլլայ զայն իրենց ուզած ուղղութեամբ առաջնորդելը: Տեսնուած է որ նման «հոգեւորութիւն»ներ յանգած են աղանդաւորական շարժման, որոնք «երանական» մահով վերջ տուած են իրենց անգամազրուած անձերու կեանքին...:

Ահա թէ ինչն՝ կարեւոր է Կիրակնօրեայ Դպրոցին տեղը եւ դերը յատկապէս մեր նոր սերունդի դաստիարակութեան աշխատանքներուն մէջ: Աստուածաշունչը կ'ըսէ. «Կրթէ՛ մանուկը իր ճաւրան սկսած ատենը» (Աւ 22.6): Երբ Կիրակնօրեայի մէջ Աստուածաշունչին ծանօթացած է մանուկը, հոն իր եկեղեցւոյ շարականները տպաւորած են զինք, անոնցմէ ոմանք գոց սորված է, պատարագին հաւաքաբար ներկայ գտնուած է, այն ատեն գէթ նուազագոյն ապահովութիւնը պէտք է զգալ, որ նոյնիսկ եթէ պատանութեան ու երիտասարդութեան տարիքին անձ մը շեղի այս ուղղութենէն, օր մը դարձեալ ետ կը վերադառնայ, որովհետեւ հիմը դրուա՛ծ է, սերմերը ցանուա՛ծ են, կը բաւէ միայն քիչ մը ջուր տալ, հաւատքի ցանքը աճեցնելու համար:

Ուստի, յատկապէս տունէն ներս Կիրակնօրեայի կատարած աշխատանքին սատար հանդիսանալու քանի մը կէտեր պիտի նշեմ, որպէս ուղեցոյց.

ա.- Քաջալերել ու հետեւողական ըլլալ: Կրօնական նուազագոյն զգացումը երեխային մէջ քաջալերել: Աղօթելու սովորութիւնը ճաշէն առաջ ու վերջ, ինքնաշարժ նստելէ անմիջապէս ետք, գիշերը քնանալէ առաջ, եւ այլն. քաջալերել, ջուր տալ այդ սքանչելի սովորութիւններուն եւ աճեցնել զանոնք մանուկին մէջ:

բ.- Լուրջի առնել երեխային կրօնական ապրումները, պատմածները, արտասանած աղօթքները, ու բնաւ չձաղրել անոր թոթով լեզուն,

մանաւանդ աղօթքի պարագային: Նման կացութիւն մը ընդզուգում կը յառաջացնէ ոչ այնքան ծաղրողին նկատմամբ, որքան աղօթքին, որ երեխային մտքին մէջ բուն պատճառը կրնայ ներկայանալ իր թոթով լեզուին:

Գ.- Կիրակնօրեայի ճամբով տուն մտած բարոյագիտական ուսուցումներուն հոգածու վերաբերում ցոյց տալով: Ասիկա շատ գործնական է եւ մնայուն կերպով արթնութիւն կը պահանջէ: Այսպէս, եթէ ստախօսութեան դէմ խօսուած է հոն, պատմութիւն պատմուած է, թէ ինչպէս տխուր վախճան կ'ունենայ ստախօս մարդը, դուն տան մէջ իբրեւ ծնողք պէտք է փորձես չստել, նոյնիսկ նուազագոյն սուտը պէտք է խօսիս, օրինակ հեռաձայնին չպատասխանելու համար, գայն վերցնողին ձեռքի նշաններով պէտք է ըսես՝ «հոս է, ըսէ, եւայլն»: Երբեմն ձեռքի այդ նշանները երեխան կը կարդայ: Եւ երբեմն կը պոռայ ու խայտառակէ քեզ անգիտակցաբար՝ ըսելով՝ «հո՛ս է, հո՛ս է»: Երբեմն ալ այդ անձին հետ հանդիպման պահուն, բոլորին առջեւ բարձրաձայն կ'ըսէ. «Այդ օր որ մամաս կը փնտռէիր, ինքը տունն էր, բայց չուզեց քեզի հետ խօսիլ»: Եւ ասիկա կ'ընէ ո՛չ թէ գիտակցաբար, այլ՝ անգիտակցաբար, որովհետեւ քրիստոնէական բարոյագիտութիւնը իրեն այդպէս սորվեցուցած է: Այս անդրադարձ շարժում մըն է, զոր կարելի է կոչել «անգիտակից բարոյագիտութիւն»:

Կիրակնօրեայ դպրոցի՛ն թէ անոր աշխատանքին նկատմամբ մեր բոլորին հոգածու վերաբերումը՝ մեր ու մեր զաւակներուն բարիքին պիտի ծառայէ: Օգտուինք այս անգուգական կառոյցէն, որ մեր կեանքը պիտի դարձնէ աւելի դիւրին, եւ նուազագոյն մտահոգութիւններով աստուածահաճոյ կեանք մը:

(Շարունակելի 3 եւ վերջ)

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ՄԱՏԹԷՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԻՆ

ՀԵՌՈՒԱԿ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԲՈՐԵԱՆ
ԽԱՔԱՐԻ՝ ԳՊԱՆԿ Բ.

Ձ ԳԼՈՒԽ

ԱՍՏՈՒԾ ԵՒ ԱՇԽԱՐՀԻ ԱՏԱՇՈՒԹԻՒՆԵՐ:

«Որեւէ մարդ չի կրնար երկու տէրերու ծառայել. որովհետեւ կամ մէկը պիտի սիրէ եւ միւսը ատէ, կամ մէկը պիտի մեծարէ եւ միւսը արհամարհէ: Նոյնպէս ալ դուք, չէք կրնար Աստուծոյ ծառայել, որքան ատեն որ կը ծառայէք դրամին: Հետեւաբար, մի՛ մտահոգուիք ձեր կեանքին համար, թէ ի՞նչ պիտի ուտէք կամ խմէք, ո՛չ ալ մտահոգուեցէ՛ք ձեր մարմնին համար, թէ ի՞նչ պիտի հագուիք: Զե՞ որ կեանքը աւելի կարեւոր է քան կերակուրը, եւ մարմինը աւելի կարեւոր է քան հագուստը:

Դիտեցէ՛ք երկինքի թռչունները. ո՛չ կը սերմանեն, ո՛չ կը հնձնեն եւ ո՛չ ալ շտեմարաններու մէջ կ'ամբարնեն, եւ սակայն ձեր երկնաւոր Հայրը կը կերակրէ զանոնք: Զե՞ որ դուք Աստուծոյ Աչքին թռչուններէն գերազանց էք: Մտահոգուիլը կանգունով մը կ'երկարէ՞ ձեր հասակը:

Կամ, ինչո՞ւ կը մտահոգուիք հագուստի համար: Օրինակ ատէ վայրի շուշաններէն եւ տեսէ՛ք թէ ի՞նչպէս կ'անհիւստանան: Եւ ի՞նչ կը հիւստեն: Հաւատացէ՛ք, որ նոյնիսկ Սողոմոն իր ամբողջ փառքին մէջ անոնցմէ մէկուն պէս գեղեցիկ չկրցաւ հագնիլ: Եթէ, ուրեմն, Աստուած այդպէս աղուոր կը հազցնէ դաշտի խոտը, որ այսօր կայ եւ վաղը կրակ կը նետուի, շատ աւելի լաւ պիտի չհազցնէ՞ ձեզ, թերահաւատներ: Հետեւաբար, մի՛ մտահոգուիք եւ ըսէք. «Ի՞նչ պիտի ուտենք, ի՞նչ պիտի խմենք կամ ի՞նչ պիտի հագնուինք»: Այդ մտահոգութիւնները հեթանոսներուն յատուկ են: Որովհետեւ ձեր երկնաւոր Հայրը գիտէ արդէն թէ այդ բոլորին պէտք ունիք: Դուք նախ խնդրեցէ՛ք որ Աստուծոյ արքայութիւնը գայ եւ աշխատեցէ՛ք իր կամքը կատարել, եւ Աստուած այդ բոլորը աւելիով պիտի տայ ձեզի:

Ինչո՞ւ ուրեմն մտահոգուիք վաղուան մասին: Վաղուան մտահոգութիւնը վաղուան ձգեցէ՛ք: Իւրաքանչիւր օրուան ներդրումը ինքնին բաւարար է» (24-34):

Այս հատուածը յստակ է, որ նախորդ երկու հատուածներուն անմիջական շարունակութիւնն է: Զանոնք քանի մը այլ օրինակներով ալ կը փորձէ պարզաբանել:

Երկնային գանձը Աստուծոյ մեզի տալիքն է: Աստուծոյ մեզի կատարելիք հատուցումն է: Արդ, եթէ երբեք մենք մեր աչքը սեւեռած ենք առ Աստուած, կամ մեր կեանքին ուղղութիւնը դարձուցած ենք առ Աստուած, բնական կերպով երկրորդական կը դասենք այն ինչ որ այս երկրի վրայ մեզ երկրաւոր մտահոգութիւններուն կը կապէ: Տեսանք. ան որ կը դիզէ՛ ինքզինք կը շղթայէ ներկայ աշխարհի հարստութիւններուն կամ ներկայ կեանքի արժէքներուն: Եւ ինքնաբերաբար իր ուշադրութիւնը կը հեռանայ երկնային կամ իսկական գանձէն: Հետեւաբար, այս սկզբունքն է, որ կը բանաձեւուի այստեղ. «Որեւէ մարդ չի կրնար երկու տէրերու ծառայել»: Ով որ կ'ուզէ Աստուծոյ կամ աստուածայինին ծառայել՝

«Որեւէ մարդ չի կրնար երկու տէրերու ծառայել»:

ինքնաբերաբար չի կրնար ծառայել աշխարհին կամ աշխարհայինին: Բնական մղումը կայ բոլորիս մէջ հաշտեցնելու այս երկուքը: Որովհետեւ ներկայ աշխարհի մարդը առաւել եւս նիւթապաշտութեան մէջ ընկղմելու վրայ է: Այսպիսի աշխարհի մէջ մեր բնական մղումը կ'ըլլայ հաշտեցնել զԱստուած եւ նիւթական հարստութիւնը: Այնպէս մը ընել, որ չմերժենք մէկը կամ միւսը, այլ միջին լուծում մը գտնենք եւ կարենանք գոհացնել թէ՛ մէկը եւ թէ՛ միւսը:

Առաջին հարցում: Կարելի՞ է սակայն մէկը գոհացնելով միւսը գոհ պահել:

Երկու հիմնական փորձութիւններ կան մարդուն դիմաց:

Առաջինը՝ դրամին փորձութիւնն է. աւելի ճիշդ՝ դրամ ունեցողին փորձութիւնն է: Այն

մարդը որ տէր է հարստութեան կամ ստացուածքի՝ հարստութիւնը կամ ստացուածքը իր փորձութիւնն են: Որովհետեւ ան տեւականօրէն պէտք է փորձէ հաշտութեան աշխատանքը կատարել: Եւ գտնել՝ թէ ի՞նչ ձեւով կրնայ հարստութիւնը կամ ստացուածքը ունենալ բայց չծառայել անոր, այլ ծառայել միայն Աստուծոյ: Ասիկա աւելորդ է ըսել, թէ հաւատացեալ մարդուն ինչիւրն է: Անհաւատին համար այս հարցը գոյութիւն չունի իսկ: Քրիստոսի կեցուածքը եթէ կ'ուզէք գիտնալ: Առհասարակ երբ ան կը խօսի նիւթական հարստութեան մասին՝ չի դատապարտեր հարստութիւնը, երբեք դատապարտութեան խօսք չունի: Քրիստոս կը ջատագովէ մարդու այն կեցուածքը՝ որ դրամը ունենալով հանդերձ՝ դրամին ստրուկ չի դառնար, այլ զայն կ'օգտագործէ կերպով մը, որ նիւթականը կը ծառայեցնէ Աստուծոյ: Օրինակ՝ յիշել Տնտեսին

Մարդը կոչուած է տնտես մը ըլլալու:

առակը: Անոր մէջ Յիսուս կը պատգամէ, թէ մեզի տրուած բազմատեսակ հարստութիւններ կան, որոնց մէջ նաեւ նիւթական հարստութիւնը: Մարդը կոչուած է տնտես մը ըլլալու: Ով որ տնտես է կամ մատակարար՝ չի կրնար չզբաղիլ հարստութեամբ: Անպայմանօրէն կը զբաղի: Զբաղիլ սակայն չի նշանակեր՝ ինքզինք ենթարկել կամ անոր ծառայեցնել:

Երբ այս երկուքին մասին կը խօսինք՝ գիտենք Աստուծոյ պահանջքը մեզմէ: Աստուած ամէն անգամ որ մեզի կը դառնայ՝ մեզմէ կը պահանջէ մեր անձերը: Զանոնք կը պահանջէ ամբողջականօրէն: Արդ, դարձեալ նոյն հարցումը կը կրկնուի տարբեր բառերով. եթէ Աստուած ամբողջականօրէն մեր միտքը եւ հոգին կ'ուզէ՝ արդեօք կարելի՞ է երկու ճիւղերու հաշտեցումը յաջողցնել: Հաշտեցնել արդեօք չի՞ նշանակեր՝ կէս ծառայութիւն ընծայել Աստուծոյ եւ կէս ծառայութիւն ընծայել աշխարհին կամ նիւթական հարստութեան: Իսկ Աստուած կիսատ այդ ծառայութիւնը կ'ընդունի՞ արդեօք, թէ ոչ: Միւս փորձութիւնը, այս անգամ ճիշդ հակառակէն դիտած, այն մարդոց փորձութիւնն է, որոնք դրամ չունին: Մէկ՝ ունեցողը այդ մտահոգութեան եւ փորձութեան ենթակայ է, մէկ ալ՝ չունեցողը: Քրիստոսի պատգամն է, որ նիւթականին համար մտահոգութիւն ունենալը օգուտ չունի: Անիկա աւելորդ է եւ կը ծառայէ մարդը Աստուծմէ հեռացնելու: Որովհետեւ տեղ մը, մանաւանդ դրամ չունեցող մարդու սրտին

Մտահոգութեանց յառաջացող մտատանջութիւնը մարդը հոգեւոր մահուան կը տանի:

ունի, իսկ ինք չունի եւ պիտի չունենայ: Մտահոգութեան յառաջացող մտատանջութիւնը մարդը հոգեւոր մահուան կը տանի: Մտահոգութիւնները միաժամանակ մարդու կեանքին մէջ քայքայիչ ոյժ կը դառնան եւ են: Այն մարդը որ տեւականօրէն ուրիշին ունեցածը ունենալու մասին կը խորհի, բնականօրէն կը դադրի իր ոյժերը կեդրոնացնելէ իր սեփական աշխատանքին վրայ: Մինչդեռ Քրիստոս ըսել կ'ուզէ, թէ այն մարդը որ մտահոգութիւններէ չի բռնուիր՝ շատ աւելի պատրաստ կ'ըլլայ ինքզինք նուիրելու որոշ աշխատանքի մը եւ աշխատանքին ընդմէջէն բարեկեցիկ կեանքի մը հասնիլ: Իսկ այն մարդը որ զուր տեղ ինքզինք կը տանջէ՝ ոչ միայն բան չի շահիր, այլեւ իր առողջութիւնը վրայ կու տայ եւ ինքզինք կը նետէ անյուսութեան մը գիրկը:

Մտահոգութիւնները երբեմն մեզի փնտուել կու տան այն՝ ինչ որ մեզի պէտք եղածէն աւելին է: Մտահոգութիւնները ոչ միայն Աստուծմէ կը հեռացնեն, այլեւ Աստուծոյ վրայ հաւատքի կամ վստահութեան պակասի արտայայտութիւն են: Այն անձը որ կը վստահի Աստուծոյ, անիկա երբեք պէտք չունի մտահոգութիւններէ բռնուելու: Զգոյշ, մտահոգութիւն բառն է շեշտուածը եւ ոչ թէ մտածելը: Որովհետեւ մարդը ամենօրեայ իր գործին մասին պէտք է մտածէ, պէտք է զայն ծրագրէ, բայց ոչ թէ մտահոգուի անոր մասին:

Ի վերջոյ մտահոգութիւններու մասին խորհած ատեն յիշենք 19-րդ համարի հարցը. երկրի՞ վրայ գանձ դիզել, թէ երկինքի մէջ: Արդ, մտահոգութիւնները ուրիշ բան չեն, քան երկրի վրայ գանձ դիզելու մարմալին արդիւնքը: Եւ ինքնաբերաբար անոնք մեզ կը հեռացնեն եւ միաժամանակ կը զրկեն երկինքի մէջ ամբարուելիք գանձէն:

մտահոգութիւնները ուրիշ բան չեն, քան երկրի վրայ գանձ դիզելու մարմալին արդիւնքը:

Այս մտածումները մեզ կը մղեն մեր աղօթքի բովանդակութեան մասին մտածելու: Թէ արդեօք աղօթքի մէջ մեր ամենօրեայ կարիքներուն մասին որեւէ խնդրանք կամ ակնարկութիւն ընելը հեթանոսական է: Մարդ արարածին իր գերդաստանի կամ ընտանիքի կամ իր անձի ամենօրեայ ուտելիքին համար մտահոգութիւն ունենալը եւ զայն բաւարարելու մասին մտածելը արդա՞ր է, թէ ոչ: Անիկա գինք Աստուծմէ կը հեռացնէ՞, թէ ոչ:

ո՞ւր է որ մտածումը կը դադրի պարզ մտածում ըլլալէ եւ կը դառնայ մտահոգութիւն:

Պէտք է մտածենք մեր կեանքը, պէտք

է ծրագրենք զայն: Սակայն ոմանց համար իսկապէս դժուար է սահմանազատելը. ո՞ր է որ մտածումը կը դադրի պարզ մտածում ըլլալէ եւ կը դառնայ մտահոգութիւն: Սահմանը կրնա՞նք որոշել: Այն վաճառականը որ գիշերը պարկելէ առաջ եւ ատեն կը խորհի, որ յաջորդ օրը ի՞նչ ընէ, որպէսզի իր շահերը բազմապատկէ: Արդեօք իր օրուան գո՞րծը ծրագրած կ'ըլլայ, թէ հարստութիւն դիզելու մտահոգութենէն բռնուած կ'ըլլայ:

Տնտեսին առակը ի՞նչ ճշմարտութիւն կը բերէ մեզի:

Կը խօսի մարդու մը մասին, բայց նկատի ունի ամբողջ մարդկութիւնը, որ ուրիշի մը քով կը ծառայէ: Ժամանակ մը ետք որպէս անիրաւ կ'ամբաստանուի: Եւ տէրը գինք կը հրաւիրէ, որ հաշիւը ներկայացնէ: Մինչ այդ հաշիւը ներկայացնելէ առաջ, օգտուելով մինչեւ հաշուետուութիւն երկարող ժամանակէն, կը կանչէ պարտապանները, այսինքն՝ անոնք որ իր տիրոջ պարտք ունին, եւ մէկուն ձէթի պարտքէն քանակ մը գեղջել կու տայ, միւսին ցորենի պարտքէն քանակ մը գեղջել կու տայ, եւ այս ձեւով այդ մարդիկը կը սիրաշահի: Երբ տէրը լսեց տնտեսին ըրածը, կ'ըսէ Յիսուս, գովեց զայն, որովհետեւ ան իմաստութեամբ վարուեցաւ: Սակայն ի՞նչն էր անոր իմաստութիւնը: Ե զ ր ա կ ա ց ու թ իւ ն ը

«... մամոնայէն
ձեզի
բարեկամներ
շինեցէք:
Որպէսզի երբ
պակսի անիկա
երկնաւոր
յարկերուն մէջ
ընդունին ձեզ»:

Քրիստոս ինք կու տայ,

ըսելով. «Դուք ալ մամոնայէն ձեզի բարեկամներ շինեցէք: Որպէսզի երբ պակսի անիկա երկնաւոր յարկերուն մէջ ընդունին ձեզ»:

Քրիստոս հարստութիւնը աւելորդ չի նկատեր, հարստութիւնը չ'արհամարհեր կամ չ'անարգեր: Այլ ընդհակառակը, գիտէ անոր արժէքը մեր երկրաւոր կեանքին համար: Բայց բան մը կը սորվեցնէ նիւթական հարստութեան հետ մեր ունենալիք յարաբերութեան մասին:

Ամէն մէկ օրուան հոգերը իրեն համար բաւարար են: Օրը օրին կարելիք կ'ընես, բայց այդ կարելին ընելէ անդին մտահոգուիլը՝ կ'օգնէ՞ որեւէ ձեւով: Ոչ մէկ բանով կ'օգնէ: Ժիշդ հակառակ արդիւնքը կրնայ ունենալ:

32-րդ համարը կ'ըսէ, թէ ուտելիք, խմելիք, հագուելիք փնտռելը հեթանոսներուն յատուկ է: Արդեօք հեթանոսին եւ քրիստոնեային միջեւ տարբերութիւն ընողը ճիշդ ի՞նչը պիտի ըլլայ:

Վերջին երկու համարները մեզի կու տան մտածում մը. «Նախ խնդրեցէք... եւ այդ բոլոր բաներն ալ ձեզի պիտի տրուին»:

Մենք մինչեւ հիմա ըսինք, որ կը բաւէ վստահութիւն ունենալ Աստուծոյ վրայ եւ Աստուած իբր գթաբառ Հայր՝ այդ բոլորը պիտի տայ մեզի: Ի՞նչ է այստեղ «Երկինքի արքայութիւնը խնդրեցէք»ը: Այս խօսքով, հարստութեան մասին մտքերը կը կապէ «Հայր մեր»ին:

Ի՞նչ է կապը մեր խնդրածին եւ Աստուծոյ տուածին: Ի՞նչ պէտք է խնդրենք, որ Աստուած մեզի տայ: Որովհետեւ Քրիստոս ինք կ'ըսէ, ինչպէս Աստուածաշունչը՝ թէ ի՞նչ բան որ Աստուծոյ կամքին համաձայն չենք խնդրել՝ չենք ստանար: Յակոբոս առաքեալ կ'ըսէ. «Ձեր ուզածը չէ՛ք ունենար, որովհետեւ Աստուծմէ չէ՛ք խնդրեր. կամ՝ կը խնդրէ՛ք, ձեր հաճոյքներուն ծառայեցնելու համար» (Յկ 4.2-3):

Ի՞նչ բան պէտք է խնդրենք, որպէսզի Աստուծմէ ստանանք:

Քրիստոս մեզի կը պատասխանէ. «Աստուծոյ արքայութիւնը»: Բայց ի՞նչ է Աստուծոյ արքայութիւնը խնդրելը:

Աստուծոյ արքայութիւնը երկրի վրայ արդէն սկսած իրականութիւն մըն է: Բայց նաեւ Աստուծոյ արքայութիւնը գալիք իրականութիւն մըն է, ամբողջանալիք իրականութիւն մըն է: Արդ, Աստուծոյ արքայութիւնը խնդրելը կամ «քու արքայութիւնդ թող գայ» ըսելը ի՞նչ կը նշանակէ:

Գրաբարին մէջ «խնդրել» բայը ոչ թէ միայն ուզել կը նշանակէ, այլ նաեւ փնտռել: Ուստի, աղօթողը կամ աղօթողները ոչ թէ միայն պիտի ուզեն, որ Աստուծոյ արքայութիւնը գայ, այլ նաեւ ճիգ տանին անոր երկրի վրայ հաստատման համար: Աշխատին որ այդ արքայութիւնը գայ եւ հաստատուի: Որ Աստուծոյ կամքը կատարուի: Որ մեր շրջապատին մէջ արդարութիւն, սրբութիւն ու խաղաղութիւն տիրէ: Հետեւաբար, մենք պէտք է մտածենք այս մասին. Դուք, կ'ըսէ Քրիստոս, Աստուծոյ արքայութիւնը խնդրեցէք, որ իրականանայ: Սակայն մենք ի՞նչ կ'ընենք եւ ի՞նչ կրնանք ընել, որ մեր կեանքին մէջ Աստուծոյ արքայութիւնը ամէն ինչէ առաջ դասած ըլլանք:

«Արքայութիւնը խնդրեցէք»ը գործնական պահանջ մը ունի. միայն աղօթքի մէջ խնդրանքը կրկնելով չ'ըլլար, ոչ ալ մտքին մէջ սնուցանելով: Այլ ամենօրեայ մեր կեանքին մէջ ընել բարի բաներ եւ բարի գործեր, որոնք Աստուծոյ կամքին արտայայտութիւնը ըլլան, եւ որոնցմով մեր շրջապատին մէջ արդարութիւնը, սրբութիւնը եւ խաղաղութիւնը բերած ըլլանք: Անկասկած՝ ո՛չ ամբողջականօրէն, քանի որ մարդկայնօրէն անկարելի է անիկա, այլ՝ մասնակիօրէն:

(Շարունակելի 27)

ԵՐԵՄՆՈՐԵԱԿ

Չորեքշաբթի, 04 Մարտ 2009

Մեծ Պաշտոն Ժ. օր

19.00 Հսկումի ժամերգութիւն
Խորհրդածութիւն՝ Ճաշակե՛ք
«Հաւատով Խոստովանիմ»ը Բ.

Հրագրւոր, 05 Մարտ 2009

Մեծ Պաշտոն ԺԱ. օր

11.00 Արեւազալի ժամերգութիւն
Խորհրդածութիւն՝
«Եղբայրսիրութիւն»ը

Կրթար, 08 Մարտ 2009

Անառաւ Կրթար

09.30 Ժամերգութիւն
11.00 Ս. Պատարագ

Երեքշաբթի, 10 Մարտ 2009

19.00 «Տա Վինչի Գոտ» քննարկում՝
Երիտասարդական ներկայացում/զրոյց

Չորեքշաբթի, 11 Մարտ 2009

Մեծ Պաշտոն ԺԷ. օր

19.00 Հսկումի ժամերգութիւն
Խորհրդածութիւն՝ Ճաշակե՛ք
«Հաւատով Խոստովանիմ»ը Գ.

Հրագրւոր, 12 Մարտ 2009

Մեծ Պաշտոն ԺԸ. օր

11.00 Արեւազալի ժամերգութիւն
Խորհրդածութիւն՝
«Խոնարհութիւն»ը

Կրթար, 15 Մարտ 2009

ՏԱՏԱՐ Կրթար

09.30 Ժամերգութիւն
11.00 Ս. Պատարագ

Չորեքշաբթի, 18 Մարտ 2009

Մեծ Պաշտոն ԻԴ. օր

19.00 Հսկումի ժամերգութիւն
Խորհրդածութիւն՝ Ճաշակե՛ք
«Հաւատով Խոստովանիմ»ը Դ.

Հրագրւոր, 19 Մարտ 2009

Մեծ Պաշտոն ԻԵ. օր

11.00 Արեւազալի ժամերգութիւն
Խորհրդածութիւն՝
«Աշխատասիրութիւն»ը

Կրթար, 22 Մարտ 2009

ԴԱՏԱՌԻ Կրթար

09.30 Ժամերգութիւն
11.00 Ս. Պատարագ

Երեքշաբթի, 24 Մարտ 2009

20.00 «Զեկոյց՝ Ազգային Ընդհանուր
ժողովի մասին»

Չորեքշաբթի, 25 Մարտ 2009

Մեծ Պաշտոն ԼԱ. օր

19.00 Հսկումի ժամերգութիւն
Խորհրդածութիւն՝ Ճաշակե՛ք
«Հաւատով Խոստովանիմ»ը Ե.

Հրագրւոր, 26 Փետրուար 2009

Մեծ Պաշտոն ԼԲ. օր

11.00 Արեւազալի ժամերգութիւն
Խորհրդածութիւն՝
«Հեղութիւն»ը

Կրթար, 29 Մարտ 2009

ԳԱՍՏԵԱՆ Կրթար

09.30 Ժամերգութիւն
11.00 Ս. Պատարագ

ՀԱՎՈՒՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՃԱՇԱԿԵՆՔ «ՀԱԽՏՈՎ

ԽՈՍՏՈՎԱՆԻՄ»ը

5-8 ՀԱՄԱՐՆԵՐ՝ ԿՐ ԽՈՐՀՐԴԱԾԷ

ԱՐԺ. Տ. ՀՐԱՅՐ

Ա. ՔՀԱՅ. ՆՐԿՈՒԵԱՆ

Չորեքշաբթի, 04 Մարտ 2009
ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄ 7.00-ԻՆ

ԱՐԵՎԱԶԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

ԵՒ

«ԵՐԲԱՅՐԱՐՐՈՒԹԻՒՆ»ը՝

ԿՐ ԽՈՐՀՐԴԱԾԷ

ԳԵՐ. ԳԷՈՐԳ

Վ. ԶԱՊԱՐԵԱՆ

Հրագրւոր, 05 Մարտ 2009
ԱՌԱՊՕՏԵԱՆ ԺԱՄ 11.00-ԻՆ

ՍՈՅՆ ԹԵՐԹԻԿՐ Ե-ԱՆԱՎՈՎ ԱՏԱՎՈՒ
ՀԱՄԱՐ ԶԵՐ Ե-ՀԱՍՅԷՆ ՈՒՊՈՒՄԵՆՏԷՔ
eglise58@sourphagop.com-ԻՆ

ՀԱՄԱՅՆԵՐԱ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԴԻԲԱՆԱՏՈՒՆԸ

ԲԱՅ Է

ԵՐԿՈՒԵՐԹԻՒՆ ՈՒՐԲԱԹ

ԺԱՄ 8.30-ԷՆ 16.00

ՀԱՆԾԷՔ ԿՊՈՒԻՒ ԲԱՐՏՈՒԱՐՈՒԹԵԱՆ՝

514 331 5445 x202

ԿԱ ՀՈՎԻՒՆ՝

514 331 5445 x203

ԿԱ ԳՐԵՂ ՀԵՏԵԵՎ Ե-ՀԱՍՅԷՐՆ՝

eglise58@sourphagop.com